ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

---

N 15

«25» փետրվարի - 2013թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ.

Կից ուղարկվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի փետրվարի 18-ին կայացած թիվ 2 արտահերթ նիստի որոշումները:

Առդիր «8» թերթ:

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ ---- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Մուտք թիվ 1909-13
«28» 02 2013

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

## ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ 5-Ա

«18» փետրվարի - 2013թ. թիվ 2 արտահերթ նիստ

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով գյուղապետի առաջարկությունը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի փետրվարի 18-ի թիվ 2 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա Գրիգորյան | [signature] | ---------- | ---------- |
| Գ. Սարգսյան | [signature] | ---------- | ---------- |
| Խ.Տերտերյան | [signature] | ---------- | ---------- |

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ ---------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2013 թվականի փետրվարի «18»
գ. Լուսագյուղ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղի
գյուղական համայնքի ավագանու
2013 թվականի փետրվարի 18-ի թիվ
2 արտահերթ նիստի N 5-Ա որոշման

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1/ Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի փետրվարի 18-ի թիվ 2 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին.

2/ Համայնքի 2013-2016 թվականների քառամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին:

3/ Դրամական օգնություն հատկացնելու մասին:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

## ԱՎԱԳԱՆՈՒ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 6-Ն

«18» փետրվարի 2013թ. թիվ 2 արտահերթ նիստ

### ՀԱՄԱՅՆՔԻ 2013-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՔԱՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, 53-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով և հիմք ընդունելով գյուղապետի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի 2013-2016 թվականնների քառամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա Գրիգորյան | [signature] | ---------- | ---------- |
| Գ. Սարգսյան | [signature] | ---------- | ---------- |
| Խ.Տերտերյան | [signature] | ---------- | ---------- |

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2013 թվականի փետրվարի «18»
գ. Լուսագյուղ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղի
գյուղական համայնքի ավագանու
2013 թվականի փետրվարի 18-ի
թիվ 2 արտահերթ նիստի
N 6-Ն որոշման

# ՔԱՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

## I. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքն (այսուհետ՝ համայնք) ունի 1271 ազգաբնակչություն, որից կին՝ 614, տղամարդ՝ 657, ընտրողների թիվը կազմում է՝ 738:

2. Համայնքի վարչական տարածքը կազմում է 252.6 հեկտար:

3. Համայնքի հեռավորությունը մարզկենտրոնից կազմում է 38 կիլոմետր:

4. Համայնքում գործում են՝

1) գյուղապետարան.

2) «Լուսագյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն.

## II. ՔԱՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԵՐԸ

5. Համայնքի քառամյա զարգացման ծրագիրն (այսուհետ՝ ծրագիր) իր մեջ ներառում է 2013 թվականից մինչև 2016 թվականը ներառյալ:

## *III. 2013 -2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ*

6. Համայնքում 2013-2014 թվականների ընթացքում նախատեսված է իրականացնել նոր միջնակարգ դպրոցի կառուցում և 2013 թվականի ընթացքում մանկապարտեզի շենքի կապիտալ վերանորոգում՝ համայնքի բյուջեով նախատեսված եկամուտների և օրենքով նախատեսված այլ աղբյուրների միջոցով:

## IV. 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

7. Համայնքում 2014 թվականի ընթացքում նախատեսված է իրականացնել կենտրոնական ճանապարհի կապիտալ նորոգում /550 գծմ երկ./՝ համայնքի բյուջեով նախատեսված եկամուտների և օրենքով նախատեսված այլ աղբյուրների միջոցով:

## V. 2015 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

8. Համայնքում 2015 թվականի ընթացքում նախատեսված է իրականացնել ոռոգման ջրի մեկ խորքային աղբյուրի հորատում՝ համայնքի բյուջեով նախատեսված եկամուտների և օրենքով նախատեսված այլ աղբյուրների միջոցով:

## VI. 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

9. Համայնքում 2016 թվականի ընթացքում նախատեսված է իրականացնել գյուղապետարանի շենքի կապիտալ վերանորոգում՝ համայնքի բյուջեով նախատեսված եկամուտների և օրենքով նախատեսված այլ աղբյուրների միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 7-Ա

«18» փետրվարի 2013թ. թիվ 2 արտահերթ նիստ

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով գյուղապետի առաջարկությունը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի սոցիալապես անապահով մի քանի բնակիչների հատկացնել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա Գրիգորյան | ------------ | ------------ | ------------ |
| Գ. Սարգսյան | ------------ | ------------ | ------------ |
| Խ.Տերտերյան | ------------ | ------------ | ------------ |

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2013 թվականի փետրվարի «18»
գ. Լուսագյուղ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղի
գյուղական համայնքի ավագանու
2013 թվականի փետրվարի 18-ի
թիվ 2 արտահերթ նիստի
N 7-Ա որոշման

# ՑՈՒՑԱԿ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1/ Կարեն Ենգիբարյան - 50000 /հիսուն հազար/ դրամ.

2/ Աստղիկ Գարեգինյան - 50000 /հիսուն հազար/ դրամ: